

Փ Ո Ւ Ն Չ

Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարսյ է : — Պօլիս ըստմանորդ ըլլալ ուղողը մէկ արծաթ Մէճիս պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 400 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման օտողը 40 փարսյ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ համակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից նոր Գրատունը :

Կ. ՊՕԼԻՍ. — ԳՈՆՍՈՒԻՏԷ

	րշ	՛ր
29 սեպտ. երկուշաբթի երեկոյ		
	46	28
30 երեքշաբթի առաւօտ		
	47	2
	47	5

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Երէկ ուշ առեւն լուր ելաւ թէ, ամեն. Խրիմեան Սրբազանին կարին հատած և կիւրակէ օրը հանդիսաւոր Պատարագ մատուցած ըլլալը ծանուցանող մասնաւոր հեռագիր մը եկած է մայրաքաղաքս : Նորին Սրբազնութիւնը արդարև կարին հասած ըլլալու է, բայց մինչև այս առաւօտ Պատրիարքարան հեռագիր եկած չէր, թերևս վերջին փոթորկին պատճառաւ հեռագրական թերերը տեղ տեղ մնասուած ըլլալուն համար :

— Կիւրակէ օրը Բերա հռոմէական աղօթանոց Ս. Յօհան Ոսկերեան եկեղեցւոյն մէջ հանգիսաւոր կերպով բանադրուեր է Մէճմուայի մէջ խօսակցութեան ձևով հրատարակուած տետրակին և միանգամայն նոյն լրագրին ընթերցումն :

Գեր. Հասուն էֆէնտին մուցած ըլլալու է թէ հիմա բանադրանքն այս զէնքը հինցած ու փտտած է. մուցած ըլլալու է թէ՛ ինչ բանի համար որ բանադրանք արդեւք ու հարածանք կըլլայ, նոյնը աւելի յառաջ կերթայ և հետամուտները կրազմապատկին : Մենք տարակոյս չունինք թէ կիւրակէ օրէն ի վեր ընդարձակուած է բանադրեալ տետրակին ու Մէճմուայը— Հալատիս լրագրին ընթերցումը : Եւ եթէ մեր հռոմէական աղօթանոց մէջ տակաւին գանուին այնպիսիք, որ բանադրանաց շանթերէն ահարեկելով ետ ետ փախչին նոյն տետրակէն ու լրագրէն, անգին լուսաւորեալ մեծաղոյն մաս մը նոյն տետրակէն փոխանակ հատ մը առնելու՝ երկու, և նոյն լրագրէն օրինակի մը տեղ երկու և աւելի պիտի ստանան :

Այն, ազատամիտ հռոմէականաց պարաքն է թող չտալ որ Մէճմուա լրագրին զո՞հ երթայ բանադրանաց և վրաս կրէ : Այս առթիւ ալ ցուցունելու է բանադրող աշխարհին վերջին յուսարեկ մնայորդաց թէ բանադրանքը արդարև աւելի ներկայ ժամանակիս մէջ ամենևն անզօր բան մ'է,

և թէ բանագրողն ոչ միայն առաջա-
դրեալ նպատակին չհասնիր, այլ և
իւր ատելին եղող բանը անուղղակի
կերպով և տգիտաբար յառաջ տարած
տարածած ու սնուցած կրլայ :

—Թիաժան անուն լրագիր մը՝ որոյ
տէր և պատասխանատուն է մեծ . Պ.
Յարութիւն է. Մինասեան, անցեալ
չաբաթ օրը սկսաւ հրատարակել խըմ-
բագրութեամբ մեծ. Պ. Պ. Մկրտիչ
Յօլակ Չօլադեանի և Աւետիս Արշակ
Մուրէնեանի, առ այժմ չորեքշաբթի
և շաբաթ օրերը հրատարակուելու և
քաղաքական աղբային ու առևտրա-
կան ըլլալու պայմաններով : —Խմբա-
դրութեան գրասենեակն է Պօլիս պղզ-
տիկ նոր խան վերի յարկը թիւ 2 :

—Գառառներէն եկած մէկ քանի
կարևոր և հետաքրքրական նամակնե-
ներու հրատարակութիւնը վաղուեան
կլթողումք :

... Խմբագիր

Քանի որ Պ. Մուրատեան խընդ-
րած բացատրութիւնս կը զլանայ, վը-
րաս պարտք մը կը գնէ ինձմէ ունե-
ցած պահանջքն իւր գործածած դը-
րամովը վճարել :

Պարտնը իւր ամէն ճարտարխօսու-
թեամբն ու տրամաբանական վարդե-
տութեամբն հանդերձ, որոյ մէկ ան-
հերքելի ցոյցն է փունջի 444րդ թը-
ուով ի լոյս արած նամակը, ստախօսու-
թիւնն արդարացնել չէ յաջողած : Բայց
նա կ'այլայլէ խնդիրը և մինչդեռ խօս-
քը գաղղիներէնի (Օլէնտօրֆի) մեթո-
տին չը հաւնած ըլլալուն վրայ էր, մէ-
կէն կը փոխէ և մեծահոշակ իմաստա-
սէր և քաղաքագէտ ժիւլ Միմօնի (վը-
կայութիւն Գաբրիէլ Եպիս. Այվազեանց)

Ազատութիւն խղճի մտայ մատեանին
դէմ կը զինուորի, քննութեանց ար-
դիւնքը չըլ կը աքնի, Պ. Ոսկանին
խօսքերն այլ ընդ այլոյ մեկնելով : Ըստ
իմ կարծեաց այս մեծահամբաւ և
բազմարդիւն դասատուն իբրև կեղ-
ծաւոր կարծեցնել է ենթադրելը որ
անցեալ Գաբրիէլեանց ներկայ ըլլալու
կարծիք մը չէ՞ կրնար յայտնել խօսքը դա-
սերն յետադէմ են նշանակէ, և դըժ-
գոհութեան ապացոյց մ'ըլլայ : Պ.
Ոսկան ազատ էր իւր միտքը մեկինե-
ղանակաւ բացատրելու, քանի որ չը-
րաւ ըսել է որ այս կողմանէ ալ Պ. Ե.
ղիտաբերին համակարծիք չէ : Մեծ Ս.
սոմ՝ աղա Չամուրճեանին գալով, ա-
սոր միայն հինգերորդ կարգին համար
«դասանին» ընդհանր խօսքը Պ. Մուրա-
տեանին ըմբռնումովը մեկնելու կա-
րելիութիւնովը ենթադրելով հան-
դերձ, մեծ արժէք մը չը կրնար ու-
նենալ հասարակաց կարծեաց արդա-
րագատ ատեանին առջև, քանզի կա-
րելի է որ խղճին դէմ զրուցել իրեն
համար ունակութիւն եղած ըլլայ :

Արդ Պ. Մուրատեանին վարժա-
րանը ապարդիւն հանելու համար թա-
փած քրտունքը՝ արդիւնք մը չ'ունե-
նար . մինակ կը մնայ այս կարծեացը
մէջ ալ, ինչպէս որ մինակ մնաց մեթո-
չը հաւնելու մասին :

Ուրեմն ի՞նչ պատասխան ունի
պարտնը, դաղղիներէն կարդերուն հա-
մար գոյլետովը խօսող վեց քննիչնե-
րուն, որք իւր անիրաւութեան դէմ
բողոքարկու են և պիտի ըլլան այնչափ
ատեն որչափ մնայ վարժարանին մէջ
ստորագրութեանց ստեղծ : Բայց ե-
թէ իրեն յետադէմ գտած կարդերն
վերտան քննուելով դարձեալ կար-

ծածկն հակառակ վճիռ տրուի, այն ժամանակ պարոնը ճշմարտութեան դէմ խօսած ըլլալուն վատութիւնը հրապարակաւ կը խոստովանի՞ :

Պ. Մուրատեան կը հարցունէ թէ ինչո՞ւ անմուռնչ կարգացի գրած արձանագրութիւնն իւր ներկայութեանը. — վայ մեղաւորիս. անանկ կէտի մը երբ բանաստեղծութեան արփին ճաճանչաւէտ ծագեալն ի վասպուրականէ, փարիլելով լոյս կուտար մութ տեղերուն, այն նորանշան հանճարն որ մուսաներն իսկ ի նախանձ շարժեց իրեն դէմ. ես մահկանացուս ի նչպէս կրնայի առանց ամպրոպայնոյն Սրամաղդայ շանթերէն անմիջապէս հարուածուելու, յանդգնարար բողոքել իրեն ըսելով « պարոն, քեզի պէս ապիկար քննիչի մը պատիւ ըրին քննութեան կանչեցին, ոչ թէ դատախօսութեանց եղանակը խճրճելու, այլ աշակերտներն քննելու և վիճակնին ազէկ կամ գէշ նշանակելով գործիդ երթալու համար » հողիդ կը սիրես ըսէ, քու ներկայութեանդ ասանկ խօսք կրնա՞յ ընել. — հարկաւ ոչ :

Պ. Մուրատեան կոխած տախտակին փտութիւնը ինք ալ հասկցեր է. կանկածելով որ թերևս սասախօսութեամբ չը յաջողի, ուրիշ տեղ մ'ալ զբարարութեան փորձ մը կընէ ըսելով որ Պ. Ոսկանը Գաղտնիքն չը բերէ գոչած ըլլամբ քաւ լիցի իրաւ է որ գաղտնիքէն չգիտէ եղեր, ըսի բայց ոչ ուրիշն այլ բուն Պ. Մուրատեանին համար, ասոր ալ վկայ են շատերը :

Տ. Լութֆեան

Յ. Գ. Եթէ լրածս ստոյգ է, Պ. Ե. Ղևազար գալ շարթու ի վան պիտի ու-

ղեւորի եղեր, քիչ մ'ալ իւր հայրենակիցներն լուսաւորելու համար : Անկեղծաբար իրեն բարի ճանապարհ կը մաղթեմ :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրիոյ կայսրը առաջիկայ նոյեմբեր ամսոյն ԱՅին մայրաքաղաքս պիտի գայ եղեր, օգոստ. Սուլթանին հետ տեսնուելու համար :

— Տիվանը ահքեամը — ապիլիէի Միւմէյիդ (սրբագրիչ քարտուղար) անուանեցան վասֆիէֆէնտի, Աթըֆ պէյ, Պէհիմ պէյ և Շէվքի պէյ :

— Կայսերական չորրորդ բանակին համարակալ կարդեցաւ Նիղամիլիէի սէրկիի դիւանին միւմէյիզներէն Ահմէտ պէյ, երկրորդ աստիճանի առաջին կարգի միւթէմայիլի պաշտօնատարութեամբ :

— Գաղղիոյ կայսրուհին վաղուեան չորեքշաբթի օրը ժամը չորսին ատեն ները մայրաքաղաքս կ'աննէ : Խիստ շքեղ ընդունելութիւն պիտի ըլլայ : Բոլոր բարձրաստիճան պաշտօնեայք Պէյլէրպէյի կայսերական պալատը ներկայ պիտի գանուին, իրենց համազեատներովը զարդարեալ :

— Կրսուի թէ, Յունաստանի Գէորդ թագաւորն ալ առաջիկայ նոյեմբերի մէջ մայրաքաղաքս պիտի գայ, յայցելութիւն օգոստ. Սուլթանին :

— Ինչպէս ուրիշ կառավարութեանց նոյնպէս և Պարսկաստանի հետ վաճառականական դաշնագրութիւն մը հաստատելու համար, Բ. Դուռը յանձնաժողով մը կազմած է պարսիկ գետպանատան կողմանէ ոյս պատճառաւ :

յատկացեալ գործակալաց հետ խորհրդակցելու պայմանաւ : Յանձնաժողովին նախագահն է առևտրական գործոց վեմբ. պաշտօնեայն , և անդամք են նոյն պաշտօնատան միւսթէշարն ու բուսուսմաթի ժողովին երկրորդ նախագահն :

—Սրբալի սահմաններէն 200ի չափ խառվայոյզ անձինք ասդին անցած ըլլալով , վիտինի կառավարիչը բաւական զօրք ու սասիկան հետք առեր և վրանին գացեր է : Ստոնցմէ 12 հողի բռնուեր և միւսները ցիրուցան ըլլալով փախեր են :

—Մնցեալ կիւրակէ գիշեր ժամը Յին ատենները Եանեայի մէջ զբօսարանէ մը հրդեհ պատահելով , ուրիշ հինգ խանութ ալ այրելէն յետոյ մարեր է :

Մայրաքաղաքիս մէջ ալ ուրբաթ գիշեր ժամը Յին ատենները Սալը պաղարի ատաղձագործի մը խանութէն հրդեհ պատահելով , 8 խանութ և 1 նաւարան այրեցան :

—Գաղղիոյ կայսրուհւոյն ճամբորդութեան ծախուց համար 730 հազար ֆրանկ որոշուեր է :

—Սֆիւնի բերքը՝ որ Սմերիկայի մէջ մինչև մօտ ժամանակներս գրեթէ ոչինչ էր , սիսեր է արդիւնաւոր ըլլալ չինացի դաղթականաց օդնութեամբ , որոնք այս բերքին մշակութեան համար փորձուած են :

—Կերևայ թէ օդապարիկով ճամբորդութիւնը վերջապէս պիտի յաջողի : —Ս. Յրանչիսիօի (Սմերիկա) մէջ ճարտարարուեստ մէկը իւր հնարած օդապարիկին մէջ երեք հողի ալ առնելով օդը բարձրացեր և ղեկով ու

ղած կողմը գացեր ու անմնաս դարձեր է : Մարդը , այս յաջողութենէն քաջալերեալ որոշեր է Ս. Յրանչիսիօէն Նիւ—Եօրք ճամբորդութիւն մ'ընել այս նորահնար օդապարիկով :

Օրթագիւղ Թաշ—վերախվէն Շահին—օղու փողոցը խուրուեան Գարբիէլ աղային մեծ տանը քողը 2500 կանգունի վրայ շինուած տուն մը կայ ծախու , մէջը բաւական պարտէզով և ծովահայեաց , նաև շուրի հաստատուն խաղալով :

Ով որ ծախու առնել ուզէ , Գուլկունճուղի Յունաց եկեղեցւոյն քով 108 թիւ տունը երթալ ու տեսնելու է խուրուեան Գարբիէլ աղայն :

Հոգեբերութիւն Յարեան անուն ընտիր վիպասանութիւն մը Սագա—Եօղուշու 38 թիւ Արևելեան գրատունը կծախուի աժան գնով :

Պօլիս Գալաֆեան գրատունը Յական զուրուշի կծախուի տեղորակ մը , որ կսովրեցունէ կերակուրներ երկելու և խմորեղէններ շինելու եղանակը :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ

Հ. Ս. ԱԼԱՅԱՅԵԱՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՅՅԵԱՆ